ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

2022թ-ի համար ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ

Ք.Երևան **28 դեկտեմբերի 2022թ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Վարդանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 2022թ-ի հունվարի 11-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 11 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1. և 2.4.3. կետերի պահանջները, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը 2022թ-ի ընթացքում իրականացրել է ակտի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով և 2-ով ներկայացված՝ 3330 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ թվով 185 ուսումնական միջոցառում, որոնց մասնակիցների թիվը կազմել է 3971՝

Անվանում	*2022թ*				
	ՀՀ ՊԵԿ նախագահի 2021թ. դեկտեմբեր 8-ի № 1266-Ա հրամանով նախատեսված		*2022թ հունվար-դեկտեմբեր ամիսներին փաստացի կատարված միջոցառումներ*		
	Ակ/ժամ	*մասնակից*	*քանակ*	*Ակ/ժամ*	*մասնակից*
Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*Կատարողական արդյունքներով վերապատրաստման ենթակա բոլոր ծառայողներ*		*Անձնակազմի կառավարման վարչությունը 26.10.22թ թիվ Ն/16-2/188266-2022 գրությամբ իրազեկել է, որ վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար իրավական հիմքեր դեռևս առկա չեն*		
Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*900*	*1500*	*103*	*1782*	*2267*
Ուսումնական դասընթացներ հարկ վճարողների համար	*600*		*82*	*1548*	*1704*
Ընդամենը	***1500***	***1500***	*185*	*3330*	*3971*

Պայմանագրով ֆինանսական աջակցության գումարը կազմում է **148,979,500.00 (մեկ հարյուր քառասունութ միլիոն ինը հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ:

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ք.Երևան, Խորենացի 7 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011054062 ՀՎՀՀ 02647057 Գլխավոր քարտուղար Է. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ Ք.Երևան, Ահարոնյան 12/3 Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018002585 ՀՎՀՀ 00107399 Տնօրենի ժ/պ Գ. Վարդանյան (ստորագրություն) Կ.Տ.